ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

01.02.2019թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃՃՁԲ-18/4-1» ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps և էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության Armeps/ppcm համակարգերի ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «19» դեկտեմբեր 2019թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մերանգուլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող») մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետով և 01.02.2019թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃՃՁԲ-18/4-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5, 7.8 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 4-րդ կետի «99 954 700 (իննսունինը միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր)» բառերը փոխարինել «109 950 170 (հարյուր ինը միլիոն ինը հարյուր հիսունը հազար հարյուր յոթանասուն)» բառերով:

1.2 Սահմանել, որ պայմանագրի պայմանները կիրառվում են 18.01.2019թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերություններից մինչև 2020 թվականի հունվարի 31-ը:

1.3 Սահմանել, որ պայմանագրում կատարվելիք փոփոխությունների պահանջը տարածվում է 2019թ. դեկտեմբերի 20-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա, և 2019թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2020թ. հունվարի 31-ը մատուցված ծառայության դիմաց վճարումը կիրականացվի 2020թ. նախատեսված միջոցների հաշվին:

2. Այլ պայմաններ

2.1. 01.02.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃՃՁԲ-18/4-1» ծածկագրով ծառայության մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ՝ 02629081 Հ/Հ՝ 900011017523 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝	«Այյունեթվորքս» ՍՊԸ ք. Երևան, Պուշկինի 38/1, 552. «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930042785480100 02588485 «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
---------- Վ. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	---------- Վ.Մերանգուլյան (ստորագրություն) Կ.Տ.